ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 328 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2026 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ N 066/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության «Շին Շողիկ» ճամբարում նորոգման աշխատանքների իրականացում՝ 25,349,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պարսամյան Կոմպանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01326125) 2026 թվականի ապրիլի 30-ին կնքված՝ N 071/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

ընկերակցության Սպիտակի մշակութային կենտրոնի համար շինարարական ապրանքների մատակարարում՝ 7,621,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Նեքսթ Լեվել Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08286722) 2026 թվականի մայիսի 7-ին կնքված՝ N 078/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության կենտրոնական գրասենյակում շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,460,459 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ